Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հոկտեմբերի 28-ի N 1374 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՇԱՐՔԸ ԴԱՍՎԱԾ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՀՈՒՄՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տարածքում հանքային ջրերի շարքը դասված և արդյունահանված հումքի օգտագործման կարգը:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կարգի մեջ կիրառված են հետևյալ հասկացությունները՝

1) **բալնեոլոգիա՝** բժշկական գիտության բաժին է, որն ուսումնասիրում է բուժիչ հանքային ջրերը, նրանց ծագումը, ֆիզիկաքիմիական հատկությունները, տարբեր հիվանդությունների ժամանակ օրգանիզմի վրա դրանց ազդեցությունը, բուժկանխարգելիչ նպատակով օգտագործման մեթոդները, բժշկական ցուցումները և հակացուցումները.

2) **բալնեոբուժում՝** (լատիներեն balneum-բաղնիք, լողանալ և բուժում) այն նախատեսում է հանքային ջրերի ներքին (խմելու) և արտաքին (բալնեոլոգիական) օգտագործում՝ տարբեր հիվանդությունների բուժման համար, որպես բուժման միջոց հանքային ջրի կիրառման տարբեր մեթոդներով (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմերսում, հոգնա, խմելու միջոցով և այլն).

3) **խմելու բուժիչ-սեղանի բնական հանքային ջուր**, որն ունի 1-10գ/դմ^3 հանքայնացում: Խմելու բուժիչ-սեղանի բնական հանքային ջրերը խմում են բուժկանխարգելիչ նպատակներով, սահմանափակ քանակներով: Դրանց անսահմանափակ օգտագործումը կարող է բերել

օրգանիզմում ջրաաղային հավասարակշռության խանգարման և քրոնիկ հիվանդությունների սրման.

4) **խմելու բուժիչ բնական հանքային ջուր**, որն ունի 10-15գ/դմ³ հանքայնացում: Այս ջրերը չեն շշալցվում և խմում են անմիջապես աղբյուրից: Խմելու բուժիչ բնական հանքային ջրերն ունեն բուժիչ ազդեցություն:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Հանքային ջրերի արդյունահանված հումքի՝ բնական հանքային ջրերի, սեղանի հանքային ջրերի, բուժիչ բնական հանքային ջրերի տարանջատումը (դասակարգումը) ու դրանց ֆիզիոլոգիական և բուժական ազդեցությունը, համալիր ֆիզիկաքիմիական, մանրէաբանական և կլինիկական հետազոտությունների հիման վրա հիմնավորում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

4. Բուժիչ բնական հանքային ջրերն օգտագործվում են բժշկի նշանակմամբ՝ բուժական նպատակներով օգտագործման ցուցումներով:

5. Խմելու արհեստական հանքայնացված ջրերը որպես բուժման միջոց չեն կարող օգտագործվել:

IV. ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԲՈՒԺԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

6. Բուժիչ բնական հանքային ջրերն օգտագործվում են՝

1) խմելու՝ ներքին ընդունման ձևով,

2) բալնեոլոգիական՝ արտաքին (լոգանքների, բուժիչ լվացումների, աէրոզոլների ինհալիացիայի, հոգնաների և այլնի) օգտագործման համար:

7. Բուժիչ բնական հանքային ջրերի ներքին ընդունման ցուցումները՝

1) մարսողական համակարգի հիվանդություններ՝

ա. ռեֆլյուքս - էզոֆագիտ,

բ. քրոնիկ գաստրիտներ՝ ստամոքսի նորմալ արտազատողական ֆունկցիայով, ստամոքսի բարձր արտազատողական ֆունկցիայով, ստամոքսի ցածր արտազատողական ֆունկցիայով,

գ. ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցային հիվանդություն,

դ. քրոնիկ կոլիտ և էնտերոկոլիտ,

ե. լյարդի և լեղատար ուղիների քրոնիկ հիվանդություններ. տարբեր էթիոլոգիայի խոլանգիտների, հետխոլեցիստէկտոմային համախտանիշ,

զ. քրոնիկ պանկրեատիտ.

2) էնդոկրին համակարգի հիվանդություններ և նյութափոխանակության խանգարումներ՝

ա. շաքարային դիաբետ,

բ. ճարպակալում,

գ. պոդագրա,

դ. միզաթթվային դիաթեզ.

3) միզասեռական համակարգի հիվանդություններ՝

ա. միզատար ուղիների քրոնիկ հիվանդություններ.

բ. քրոնիկ պիելոնեֆրիտ,

գ. երիկամաքարային հիվանդություններ,

դ. քրոնիկ ցիստիտ,

ե. ուրետրիտ.

4) արյան հիվանդություններ՝ երկաթդեֆիցիտային սակավարյունություններ:

8. Բալնեոլոգիական (արտաքին օգտագործման համար) ջրերի ցուցումները՝

1) ածխաթթվային ջրերը (ածխաթթվի 0,75-2,0գ/դմ^3 պարունակությամբ) ցուցված են սիրտ-անոթային, այդ թվում՝ սրտային անբավարարության նախնական փուլերում և սրտի

ռիթմի խանգարումների, նյարդային համակարգի, շնչառական օրգանների, մարսողական համակարգի հիվանդությունների բուժման համար.

2) ծծմբաջրածնային (ծծմբաջրածնի 10-250մգ/դմ^3 պարունակությամբ) ջրերը ցուցված են սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների (սրտի իշեմիկ հիվանդություն, հիպերտոնիա, սրտի արատներ), անոթային, ներվային, հենաշարժական համակարգի, գինեկոլոգիական, մաշկային հիվանդությունների բուժման համար.

3) քլորիդ-նատրիումական ջրերը (քլորիդ-նատրիումական աղերի 10-60գ/դմ^3 պարունակությամբ) ունեն արտահայտված հակաբորբոքային, ցավազրկող, իմունային համակարգը կարգավորող ազդեցություն և առավել հաճախ օգտագործվում են սիրտ-անոթային համակարգի ախտահարումների բուժման համար.

4) ռադոնային (ռադոնի խտությունը 5-200 նԿի/լ) ջրերը ցուցված են սիրտ-անոթային, նյարդային, միզասեռական, մաշկային, հենաշարժական համակարգի հիվանդությունների բուժման համար.

5) բրոմային, յոդային և յոդաբրոմային ջրերը ցուցված են աթերոսկլերոզի, թիրիոտոքսիկոզի, ձվարանների դիսֆունկցիայի բուժման համար.

6) սիլիկատային ջրերը (սիլիկաթթվի 50մգ/դմ^3 և ավելի պարունակությամբ) ցուցված են սիրտ-անոթային, նյարդային, միզասեռական, մաշկային, թիրիոտոքսիկոզի, հենաշարժական համակարգի հիվանդությունների բուժման համար.

7) արսենային ջրերը խիստ տարբերվում են իրենց քիմիական և գազային կազմով, ցուցված են սիրտ-անոթային, նյարդային, թիրիոտոքսիկոզի բուժման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ